ԱՄՀ-ն աշխատակազմի մակարդակով համաձայնություն է ձեռք բերում Հայաստանի «Պահուստային ծրագրի» շրջանակում հինգերորդ ամփոփիչ ստուգման շուրջ

ԱՆՀԱՊԱՂ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Առաքելության ավարտին կազմվող մամուլի հաղորդագրությունները ներառում են ԱՄՀ աշխատակազմի թիմերի հայտարարությունները, որոնք երկիր կատարած այցից հետո ներկայացնում են նախնական եզրահանգումները: Սույն հայտարարության մեջ արտահայտված են ԱՄՀ աշխատակազմի տեսակետները և պարտադիր չէ, որ ներկայացնեն ԱՄՀ Գործադիր խորհրդի տեսակետները: Առաքելության նախնական եզրահանգումների հիման վրա աշխատակազմը կկազմի զեկույց, որը ղեկավարության կողմից հաստատվելու դեպքում կներկայացվի ԱՄՀ Գործադիր խորհրդին՝ քննարկման և որոշման կայացման համար:

- *ԱՄՀ աշխատակազմը և Հայաստանի իշխանություններն աշխատակազմի մակարդակով համաձայնություն են ձեռք բերել ՀՀ իշխանությունների կողմից կանխարգելիչ համարվող՝ եռամյա «Պահուստային ծրագրի» (SBA) հինգերորդ ամփոփիչ ստուգման շուրջ: «Պահուստային ծրագրի» նպատակն է աջակցել կառավարության քաղաքականության և բարեփոխումների օրակարգին՝ մակրոտնտեսական կայունությունը պահպանելու և կայուն և ներառական աճը խթանելու համար:*
- *Տնտեսական բարձր ակտիվությունը պահպանվել է: 2024 թվականին ՀՆԱ-ի աճը հասել է 5.9 տոկոսի, իսկ 2025 թվականին ակնկալվում է, որ այն կնվազի մինչև 4.5 տոկոս, ինչը պայմանավորված է գլոբալ ավելի բարձր անորոշության պայմաններում աճի արտաքին շարժիչ ուժերի թուլացմամբ:*
- *Քաղաքականության առաջնահերթությունների թվում են տնտեսական դիմակայունության բարձրացումը, հարկային եկամուտների հետագա ներգրավումը և ծախսերի առաջնահերթությունների սահմանումը՝ պարտքի չափավոր մակարդակը պահպանելու համար, ինստիտուցիոնալ դաշտի ուժեղացումը և կառուցվածքային բարեփոխումների շարունակումը՝ ուղղված աշխատուժի արտադրողականության խթանմանը, առևտրի բազմազանեցման մեծացմանը և ընդհանուր գործարար միջավայրի բարելավմանը:*

Վաշինգտոն, ԿՇ – 2025 թ. ապրիլի 24: Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) թիմը, Իվա Պետրովայի գլխավորությամբ, 2025թ. մարտի 31-ից մինչև ապրիլի 10-ն այցելեց Երևան և քննարկումներ անցկացրեց «Պահուստային ծրագրի» (SBA) շրջանակում հինգերորդ ամփոփիչ ստուգման համար: Քննարկումների ավարտին՝ տկն. Պետրովան արել է հետևյալ հայտարարությունը.

«Ուրախ եմ հայտարարել, որ ԱՄՀ թիմը և ՀՀ իշխանություններն աշխատակազմի մակարդակով համաձայնություն են ձեռք բերել քաղաքականությունների շուրջ՝ եռամյա «Պահուստային ծրագրի» շրջանակում հինգերորդ ամփոփիչ ստուգումն ավարտելու համար. ծրագիրն աջակցում է Հայաստանի տնտեսական բարեփոխումների ծրագրին: Համաձայնությունը ենթակա է ԱՄՀ-ի գործադիր խորհրդի հաստատմանը, որի կողմից այս ամփոփիչ ստուգման քննարկումը նախատեսվում է հունիսին: Այս հաստատումը հնարավորություն կտա օգտվելու շուրջ 25 միլիոն ԱՄՆ դոլարից (18.4 միլիոն

փոխառության հատուկ իրավունքից (ՓՀԻ))՝ «Պահուստային ծրագրի» մեկնարկից սկսած ընդհանուր հասանելիությունը հասցնելով շուրջ 149.9 միլիոն ԱՄՆ դոլարի (110.4 միլիոն ՓՀԻ)։

«Հայաստանի տնտեսական բարձր ակտիվությունը պահպանվում է. 2024 թվականին ՀՆԱ-ի իրական աճը կազմել է 5.9 տոկոս, որը պայմանավորված է սպառման և ներդրումների ակտիվությամբ: Զբաղվածության աճը եղել է կայուն, իսկ գնաճը մնում է զսպված՝ 2025 թվականի մարտին տարեկան կտրվածքով աստիճանաբար հասնելով 3.3 տոկոսի՝ սպասումներին համապատասխան։ Ընթացիկ հաշվի պակասուրդը փոքր-ինչ ընդլայնվել է՝ 2024 թվականին հասնելով ՀՆԱ-ի 3.9 տոկոսին, ինչը պայմանավորված է առևտրի, զբոսաշրջության և տրանսֆերտների ներհոսքի թուլացմամբ։ 2024 թ. հարկաբյուջետային դեֆիցիտը սահմանափակվել է ՀՆԱ-ի 3.7 տոկոսով՝ պահպանելով կենտրոնական կառավարության պարտքը՝ 48.3 տոկոս չափավոր մակարդակի վրա: Բանկային համակարգն ունի բարձր շահութաբերություն և կապիտալի ու իրացվելիության մեծ բուֆերներ։

«Ակնկալվում է, որ իրական ՀՆԱ-ի աճը ընդհանուր առմամբ բարձր կմնա, սակայն 2025 թվականին կվերադառնա իր ներուժին՝ 4.5 տոկոս՝ պայմանավորված առևտրի և ծառայությունների նորմալացմամբ։ Ակնկալվում է, որ գնաճը մինչև 2025 թվականի վերջը կշարունակի մնալ ՀՀ կենտրոնական բանկի (ԿԲ) թիրախի շուրջ։ Այս հեռանկարի ռիսկերը բխում են աննախադեպ անորոշությունից, որը կապված է գլոբալ առևտրի շարունակվող լարվածության և առևտրային գործընկերների աճի հնարավոր դանդաղեցման հետ։ Տարածաշրջանային աշխարհաքաղաքական տեղաշարժերը, որոնք կարող են հանգեցնել կապիտալի վերջին շրջանի ներհոսքի և արտարժույթի տատանողականության փոփոխմանը, նույնպես ազդում են հեռանկարի վրա։

«Իշխանությունների առաջիկա միջնաժամկետ ծախսերի շրջանակը նպատակ ունի պահպանելու մակրոֆիսկալ կայունությունը՝ միաժամանակ աջակցելով Հայաստանի զարգացման կարիքներին։ Այս համատեքստում 2025 թվականի բյուջեի դեֆիցիտի թիրախը ՝ ՀՆԱ-ի 5.5 տոկոսը, շարունակում է մնալ պատշաճ՝ բավարարելով առաջնահերթ ծախսային կարիքները, այդ թվում՝ ազգային անվտանգությունը, փախստականների ինտեգրումը և ենթակառուցվածքների զարգացումը։ Այնուամենայնիվ, ծախսերի աճող ճնշումների պայմաններում հարկաբյուջետային տարածքի ստեղծումը՝ միաժամանակ ապահովելով աստիճանական հարկաբյուջետային կոնսոլիդացիա, կպահանջեն ծախսերի առաջնահերթությունների կշռադատված որոշում, վերջերս ներդրված հարկային քաղաքականության միջոցառումների և եկամուտների վարչարարության հետագա ջանքերի իրականացում: Բարոփոխումները, որոնք ուղղված են միջնաժամկետ հարկաբյուջետային պլանավորման ուժեղացմանը, հանրային ֆինանսների կառավարման ամրապնդմանը, այդ թվում՝ հարկաբյուջետային ռիսկերի կայուն կառավարման, թափանցիկության և կառավարման միջոցով, ինչպես նաև պետական ներդրումների կառավարման շրջանակի ամրապնդմանը, շարունակում են կարևոր մնալ հարկաբյուջետային կայունությանը աջակցելու տեսանկյունից։

«Գնաճային զսպված ճնշումների և գնաճի խարսխված սպասումների պայմաններում դրամավարկային քաղաքականության ներկայիս դիրքը պատշաճ է: Հաշվի առնելով զգալի անորոշությունը՝ ՀՀ Կենտրոնական բանկը (ԿԲ) պետք է շարունակի ուշադրությամբ մշտադիտարկել տնտեսական զարգացումների ընթացքն ուգնաճային սպասումները և պատրաստ լինի ճշգրտելու քաղաքականության տոկոսադրույքները, եթե գնաճային սպասումները շեղվեն թիրախից: Ճկուն փոխարժեքը շարունակում է մնալ որպես շոկերի հիմնական կլանիչ, և ողջունելի է իշխանությունների հանձնառությունը՝ ուղղված

միջազգային պահուստների առողջ բուֆերների պահպանմանը: ՀՀ ԿԲ-ն շարունակում է զգոնությամբ մշտադիտարկել ֆինանսական հատվածի ռիսկերը և շարունակել իր վերահսկողական գործիքակազմի և կարողությունների բարելավումը:

«Կառուցվածքային բարեփոխումներին միտված ջանքերը պետք է շարունակվեն՝ ամրապնդելու տնտեսական դիմակայունությունը և խթանելու ներառական աճը: Ողջունելի են իշխանությունների ծրագրերը, որոնք ուղղված են աշխատուժի կազմում խոցելի խմբերի մասնակցության, երկրի արտահանման զամբյուղի և շուկաների բազմազանեցման խթանմանը, ինչպես նաև կորպորատիվ թափանցիկության և ֆինանսների հասանելիության բարելավմանը: Այս նպատակներին հասնելու համար պահանջվում է զբաղվածության և արտահանման ռազմավարությունների ժամանակին և արդյունավետ իրականացում, կառավարման բարեփոխումների առաջնահերթությունների սահմանում և սնանկության դաշտի արդիականացում՝ որակյալ ներդրումներին օժանդակելու համար:

«ԱՄՀ թիմը շնորհակալություն է հայտնում ՀՀ իշխանություններին, մասնավոր հատվածին, զարգացման գործընկերներին և դիվանագիտական համայնքին՝ արգասաբեր քննարկումների և համագործակցության համար»: